

ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

ՎԱՆԵՆԻ

Վանենին (հիշվում է նաև Նանա անունով) Սարգիս Զաքարյանի դուստրն է, Զաքարեի և Իվանեի քույրը: Ամուսնացած էր Կյուրիկյան Աբաս թագավորի հետ:

Աբաս թագավորը 1192 թվականին, 19 տարեկան հասակում, մահացել է: Վանենին իր վաղամեռիկ ամուսնու հիշատակը հավերժացնելու համար կառուցում է Սանահնի կամուրջը: Իր շինարարական արձանագրությամբ Վանենին հայտնում է.

«...Ես՝ Վանենի ... կին Աբաս թագաւորի, որ կիսաւրէ վախճանեալ խաւարեցոյց զմեզ, շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ միսիթար ինձ...»[60]:

Վանենի թագուհին Սանահնի կամուրջը կառուցել է 1192 թվականից հետո: Դեբեդ գետի երկու ափերը կապող միաթռիչք, 18 մետր բացվածքով կամուրջն այժմ էլ գործում է, իրար է կապում Սանահինն ու Ալավերդին:

Ամուսնու մահից հետո Վանենի թագուհին որդեգրում է Հովհաննավանքի վարդապետներից մեկին՝ Մարգարեին: Մարգարեի միջնորդությամբ Վանենի թագուհին միջոցներ է տրամադրում Հովհաննավանքի պարիսպները կառուցելու համար: Պարիսպների կառուցումը հսկում ու ղեկավարում է ինքը՝ Մարգարե վարդապետը: Սակայն Վանենի թագուհուն վիճակված չէր վայելելու նաև որդեգիր որդու քաղցրությունը. պարիսպների կառուցման պահին Մարգարեն մահանում է՝ խոր վիշտ պատճառելով թագուհի մորը: Վանենի թագուհին Մարգարեի գերեզմանին գեղաքանդակ խաչքար է կանգնեցնում: Թեև խաչքարը կոտրվել է, ոչնչացել, սակայն խաչքարի արձանագրությունը ժամանակին արտագրել է պատմիչ Զաքարիա սարկավագը և փրկել կորստից: Ահա այն.

«...Ես Նանայս ... կանգնեցի ի վերայ նորակերտ վարդապետիս Մարգարէի (խաչ) և որ սկիզբն յաշակերտութեան իւրոյ որդիացաւ ինձ և առաւել եղեւ քան զծնունդ յորովայնի, և հոգայր զօգուտն հոգւոյ իմոյ և իմ. տեսեալ զյօժարութիւն սրտի նորա անկայ ի շինութիւն պարսպին՝ նորա առաջնութեամբ: Եւ մինչ նա յայս բարւոյ գործոյս վերակացութեան էր, մերձեցաւ կատարած կենաց նորա և ի հող էջ մանկահասակ և մեզ սուգ անմխիթար եղև փոխումն նորա»[61]:

ԴՈՓ

Դոփը հայ-վրացական միացյալ զորքերի գերագույն հրամանատար (ամիր-սպասալար) Սարգիս Զաքարյանի դուստրն է, Զաքարեի և Իվանեի քույրը:

Սարգիս Զաքարյանը Դոփին կնության է

[60] **Կ. Դաֆթարյան,** Սանահնի վանքը, էջ 185—186:

[61] **Կ. Դաֆթարյան,** Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 113:

տվել Խաչենի Ծարա ճյուղի գահերեց Հասան Ա. իշխանին: Ինչպես ճիշտ նկատել է պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը, Հասան Ա-ը վաղ է մահացել, և իշխանությունը հանձնվել է Դոփին[62]: Դոփի անունով էլ կոչվում էին որդիները, նրա անունով էլ հետագայում պատմության մեջ մտավ այս իշխանական տունը[63]:

1210-ական թվականներին մահացել է Հաթերքի մեծ իշխան Հասանը (Արզու խաթունի ամուսինը), և Իվանե Զաքարյանը նրա հայրենի Հաթերքը ևս միացնում է քրոջ իշխանությանը:

Դոփի շինարարական ամենաաչքի ընկնող ձեռնարկումը Խաղա վանքի գավթի կառուցումն է: Խաղա վանքը կառուցել է նրա տեգրը՝ Հովհաննեսը, և 1204 թվականին նվիրել է եղբորը՝ Հասան Ա-ին: Դոփը 1225 թվականին կառուցում է գավիթը և նվերներ տալիս եկեղեցուն.

«... տուի Աւետարան և զՅանկաբակուց երկիրն և յԱկուռինայ զիմ մատաղիս, իմ հոգւոյս...»[64]:

Դոփն իր իշխանությունում լիիրավ տեր էր (անգամ այն ժամանակ, երբ որդին՝ Գրիգորը, արդեն Ծարի մեծ իշխանն էր): Նա էր ղեկավարում իշխանությունը, լուծում մշակութային-լուսավորական խնդիրները: Դոփի որդիներն են Հաղբատի եպիսկոպոս Գրիգորը, Սանահնի, ապա Հաղբատի եպիսկոպոս և առաջնորդ Հովհաննեսը, Գրիգոր մեծ իշխանը և Գևորգը:

Դոփը թաղված է Հաղբատում, տեգրոջ կառուցած մեծ գավթում, որդու՝ Հովհաննես եպիսկոպոսի կողքին: Նրա տապանաքարի վրա փորագրված է. «Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դաւփն»[65]:

ՄԱՄԱԽԱԹՈՒՆ

Մամախաթունը Աբրահամ Լոռեցու որդի Խաչերեսի և Ծուշանի դուստրն է:

1209 թվականին Խաչերեսը ութ խանութ, երեք տուն և մի այգի է նվիրել Բագնայրի վանքին: Մամախաթունը, հետևելով հոր օրինակին, ինքը ևս խանութ է նվիրել վանքին և հոր արձանագրության տակ փորագրել է տվել. «Ես՝ Մամախաթունս .... ետու զիմ կուղպակն...»:

1219 թվականին Մամախաթունը տարաժամ մահացել է: Նա ամուսնացած չէր և ժառանգ չուներ, և որպեսզի անհիշատակ չմնար, նրա բաժին միջոցները տրվում են Անի մայրաքաղաքի արևելյան պարսպի աշտարակի կառուցմանը (դրանից մեկ տարի առաջ իր հիշատակին աշտարակ էր կառուցել նաև Մամախաթունի մայրը՝ Ծուշանը): Աշտարակի պատին Մամախաթունի անունից փորագրված է.

«... ես՝ Մամախաթունս, դուստր Խաչերեսին Լոռեցոյ անժամ ի Քրիստոս գնացի... անյիշատակ էի, շինեցի զբուրջս յիշատակ ինձ...»[66]:

Մոր և դստեր այս մեծագործությունը առիթ է տվել Լեոյին «Անի» գրքում գրելու. «Հայը մեռնելիս կտակ էր անում իր հոգու փրկության համար և այդ կտակի մեջ միայն այս կամ այն սուրբը, այս կամ այն ուխտատեղին չէր հիշվում, այլ մայրաքաղաքի շրջապարիսպը, որ հարկավոր էր մարդկանց պաշտպանության համար»[67]:

ԶԱԶԱ

Զազա իշխանուհին Գրիգոր Խաղբակյանի կինն է:

Գրիգոր Խաղբակյանը Իվանե Զաքարյանի բանակի ճանաչված զորականներից էր: 13-րդ դարի սկզբներին Գրիգոր Խաղբակյանը հողեր ստացավ թուրք-սելջուկներից մաքրված Վայոց ձորում: Նրան հանձնվեց Ուրծը:

Գրիգորը և Զազան շինարարական աշխատանքներ են կատարում ստացած հողերում: Նրանց միջոցներով ու ջանքերով կառուցվում է Աղջոց Սուրբ Ստեփանոս վանքը, որ դառնում է հոգևոր կենտրոն:

1222 թվականին Գանձակի մոտ, ղրփչաղների դեմ մղած անհաջող ճակատամարտում, Գրիգոր Խաղբակյանը գերի է ընկնում: Ղրփչաղները Գրիգորին խոստանում են ազատել, եթե նա ուրանա քրիստոնեությունը: Գրիգորը մերժում է նրանց առաջարկը, ավելին՝ անարգում է Մահմեդին: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Գրիգորի պատասխանից մոլեգնած ղրփչաղները «քարշեցին զնա մերկ ի վերայ երկրի, և փշով քանցեցին զամենայն մարմին նորա, և այնքան տանջեցին

[62] Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 141 և հետո:

[63] Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանցը, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 158. «...Եվ՝ Գրիգոր, Դաւփին որդի»: ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 84. «...պարոնաց պարոն զԳրիգոր որդի Դաւփիս...»:

[64] Ստորագրութիւն կաթուղիկէ, Բ, էջ 363: Զալալեանց, Ա, էջ 207:

[65] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 185:

[66] Լեո, Անի. տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Ե., 1963, էջ 190—191:

[67] Նույնը, էջ 190:

Գրիգոր Խաղբակյանի կնոջ՝ Զազա իշխանուհու կանգնեցրած խաչքարը (1233 թ.)

զնա, մինչև ի գանելն աւանդեաց զհոգին»[68]:

Ամուսնու հիշատակը հավերժացնելու համար 1233 թվականին Զազա իշխանուհին Արարատի շրջանի Իմերզեկ գյուղի մոտ, Արջաձորի բարձունքում, կանգնեցնում է գեղաքանդակ խաչքար, որն իր կատարողական արվեստով քանդակագործության կատարյալ նմուշ է:

Խաչքարի թիկունքի արձանագրությունը հմտորեն վերծանել է վիմագետ Սուրեն Սաղումյանը: Ահա այն.

«Այս նշան կենաց կանգնեալ ի փրկութիւն հզաւր զաւրականի Քրիստոսի Գրիգոր իշխանի, որդի Խաղբակա, որ բազում արութիւն, քաջութիւն ցուցեալ ընդդէմ թըշնամեաց խաչի Քրիստոսի և յետոյ ըմբըռնեալ ի Գանձակ շահաստան, արեամբ պսակեց զկեանս իւր բազում տուժիցն: Որք երկրպագէք հանդերձելոյն ի վերա խաչիս յիշեցէք զմեծ իշխան Գրիգոր եւ զՋազայն՝ ամուսին նորա, որ զխաչս կանգնեաց եւ զՎասակ որդի նորին Գրիգորն»[69]:

Գրիգոր իշխանի հիշատակին կանգնեցված հրաշակերտ խաչքարը կերտել է քարգործ վարպետ Աբելը:

Զազա իշխանուհու կանգնեցրած խաչքարն իր պատվանդանով տեղափոխվել է Էջմիածին ու տեղադրվել Մայրավանքի շրջափակում:

ՍԱԳԴՈՒԽՏ

Սագդուխտը Ինայի կինն է: Ամուսիններն ապրել են 13-րդ դարի առաջին կեսում:

1231 թվականին Սագդուխտ և Ինա ամուսինները Մարտունու շրջանի Արծվաքար գյուղից մոտ չորս կիլոմետր հեռու, Մանուչեի դաշտում, մի փոքրիկ եկեղեցի են կառուցում: Եկեղեցին կառուցված է սրբատաշ քարով:

Եկեղեցու շինարարական արձանագրությունը փորագրված է արևելյան պատին, արտաքուստ: Ահա այդ արձանագրության առաջին մասը.

«...Ի թվականութեանս հայոց ՈՁ (1231), ... ես՝ Ինայս, գնեցի զԱգարակս եւ շինեցի զեկեղեցիս. ես եւ Սագդուխտ ամուսին իմ, յիշատակ մեզ եւ ծնաւղաց մերոց»[70]:

Արձանագրության առաջին հրատարակիչ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը սխալ է վերծանել ամուսինների անունները, որի հետևանքով Ինան վերածվել է Մինայի, Սագդուխտը՝ Մագուստի, միաժամանակ փոխվել են ամուսինների դերերը:

Սագդուխտի և Ինայի կառուցած եկեղեցին այժմ էլ կանգուն է:

ՄԼՔԱՆ

Մլքանը Խաչենի իշխան Վախթանգի թոռն է, նրա Գրիգոր վաղամեռիկ որդու դուստրը: Մլքանի ամուսինն է Կուտկանի թոռ Վասակը, որը հովանավորում էր Մակարավանքը:

13-րդ դարի չորրորդ տասնամյակում, 1240 կամ 1241 թվականին, Մլքանը 30 դահեկան գումար և գոմեշներ է նվիրել Հաղբատի զանգակատան շինության համար[71]: Ավելի ուշ Մլքանը նվերներ է տվել Մակարավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցուն և իր ննջեցյալների հոգու համար ստացել է պատարագ կատարել տալու իրավունք: Ահա նրա Մակարավանքի արձանագրությունը.

«...Ես՝ Մլքան, դուստր Գրիգորի, որդոյ Վախթանգա... միաբանեցա սուրբ Աստուածածնիս յառաջնորդութեան հաւր Դաւթի եւ այլ միաբանացս, եւ սոքա էտուն ինձ ի տարին Գ ծամ, ի տաւնի սրբոյ Հռիփսիմեացն»[72]:

ԹԱՄԹԱ

Թամթան Միփորեալցի տեր Տաշուրակի կինն է: Ամուսիններն ապրել են 13-րդ դարի երկրորդ կեսում:

Թամթան և Տաշուրակը զավակ չեն ունեցել: Եվ, որպեսզի անհիշատակ չմնան, 1297 թվականին Վարդենիսի շրջանի Ակունք գյուղի մոտ գտնվող գյուղատեղում, որ տեղացիները Հին Ղըրխբուլաղ կամ «Գոմեր» են կոչում, կանգնեցնում են մեծ, գեղեցկաքանդակ խաչքար: Խաչքարի արձանագրությունում ասվում է.

«Ի թվին ՉԽՁ (1297)... ես՝ Տաշուրակս, որդի Բազումշահի, տէր Միփորելաց, կանգնեցի զխաչս ինձ եւ ամուսնին իմոյ Թամթոյ ի փրկութեան հոգոյ մերոյ, զի էաք անզաւակ: Որք երկրպագանէք յաղաւթս յիշեցէք»[73]:

---

[68] Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 206:

[69] Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Խաղբակյան տոհմի մասին, «Լրաբեր» (ԳԱ), 1977, № 9, էջ 96:

[70] Դիվան հայ վիմագրության, պրակ 4, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Ե., 1973, էջ 109:

[71] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 227:

[72] Դիվան հայ վիմագրության, պրակ 6, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հ. Մ. Ջանփոլադյան, Ե., 1977, էջ 167—168:

[73] Դիվան հայ վիմագրության, պրակ 4, էջ 355:

ՎԱԽԱԽ

Վախախը Ռուզուքանի և Խար Ասլանի դուստրն է: Ամուսինն է Եղվարդի տեր պարոն Ազիզբեկը:

Շահնշահ Զաքարյանից ստանալով Եղվարդը, Ազիզբեկն ու Վախախը շինարարական-լուսավորական մեծ աշխատանք կատարեցին այդտեղ: Ներսես քահանան, որին իրենց հարկի տակ սնուցել ու մեծացրել են Վախախն ու Ազիզբեկը, գրում է. «Եւ զանհասանելի երկրաչափ զհեռաւորութիւն տեղոյ, որ ի քաղաքէն Բըջնոյ մինչև Կարբի ոչ գտանէին ջուր յարբունս մարդկան, և պապակէին անցորդք ճանապարհաց ի տապոյ յաւուրս ամարայնոյ»[74]: Վախախն ու Ազիզբեկը ձեռնամուխ եղան ջրանցքի կառուցմանը: 1289 թվականին ջուրը մտնում է Եղվարդ: Ներսես քահանան ցնծությամբ գրում է. «Եւ ի գալ և ի մըտանել ջրոյն յանտաստանս մեր, վերըստին նորոգեցան ամենայն արմատք, և նորափետուր զարդարեցան և զըւարճեցան ամենայն կենդանիք՝ մարդ և անասուն, թռչունք երկնից և գազանք զովանաին, զուարճանային և ուրախ լինէին...»:

1301 թվականին ամուսինները գյուղի հարավ-արևելյան կողմում կառուցում են մի շքեղ եկեղեցի: Եկեղեցին եռահարկ է, առաջին և երկրորդ հարկերի պատերը ծածկված են որմնանկարներով: Երրորդ հարկը սյունազարդ զանգակատուն է: Արտաքինից բոլոր ճակատները քանդակազարդ են:

Եկեղեցու կառուցումից տասնչոթ տարի անց Վախախ իշխանուհին Ներսես քահանային պատվիրում է Ավետարան ընդօրինակել: Ներսես քահանան մեծ ջանասիրությամբ կատարում է «ծնողագոթ» տիկնոջ պատվերը: Վախախը իր հիշատակարանում գրում է. «...և յամենայն մտաց, և յամենայն զաւրութենէ իմէ, և ետու գրրել զաւետարանս ... յիշատակ ինձ, և առն իմում և բարի լծակցին իմո պարոն Ազիզպէկին, և ծնողաց իմոց, և զաւակաց»: Վախախ իշխանուհին իր պատվիրած Ավետարանն ընծայել է իրենց կառուցած եկեղեցուն: Վախախ իշխանուհու Ավետարանն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում:

ԱՎԹԱԽԱԹՈՒՆ

Ավթախաթունը Վայոց ձորի իշխաններից Խալաշահի որդի Վաղթանկի կինն է: 1313 թվականին Ավթախաթունը 100 դեկան գումար է նվիրել Թանահատի վանքին և Սուրբ Ստեփանոս եկեղեցու արևմտյան մուտքի կամարին արձանագրել է.

«...ես՝ Ավթախաթունս, ամուսին Վաղթանկա, որդոյ Խալաշահի, տվի ՃՄ(100) դեկան սուրբ Ստեփանոսիս... Թվին ՉԿԲ (1313)»[75]:

ՋԱԼԻԼԱՅ ԽԱԹՈՒՆ

Ջալիլայ Խաթունը 1317 թվականին երիտասարդ հասակում մահացել է: Արճեշ գավառի Արջո վանքի կրոնավոր Հայրապետ գրիչը ի հիշատակ Ջալիլայ խաթունի արտագրել է մի գեղեցիկ Ավետարան:

Ավետարանի հիշատակարանը Ջալիլայի անունից գրել է Հայրապետ գրիչը: Ահա այն որոշ կրճատումներով.

«Ես՝ Ջալիլայ Խաթունս... թողի զտուն իմ, թողի զժառանգութիւն իմ, թողի զհայրենիս իմ, լքի զկեանս իմ, մերձեցայ ի դուռնն գերեզմանիս, աւտարացայ ի սիրելեաց իմոց՝ ի բարեկամաց և յազգականաց իմոց: Կործանեցաւ հասակս կանգուն, անգաւ բարձրաբարձ աշտարակս, խանգարեցաւ գեղեցկութիւնս, խաւարեցաւ լուսատեսիլ աչք իմ և լուսոյ, խցեցաւ դրունք լսելեաց, լռեաց լեզուս արագ, հատաւ բարբառ ի բերանոյս...»[76]:

Ջալիլայ Խաթունի հիշատակին գրված Ավետարանը գտնվում է Երևանի Մատենադարանում:

ԽՈՐԻՇԱՀ

Միջին դարերում Վայոց ձորով էր անցնում Նախիջևանից Բարդա քաղաք տանող առևտրական ուղին, որի դժվարին կետերից մեկը Սելիմի լեռնանցքն էր: Եվ այստեղ, լեռնանցքի ամենաբարձր մասի՝ դեպի Վայոց ձոր նայող հարթության վրա, իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելյանի որդի Զեսար իշխանը և իր կինը՝ Վարդան իշխանի և Դոփի դուստր Խորիշահը, 1332 թվականին կառուցել են Սելիմի նշանավոր իջևանատունը: Իջևանատան շինարարական արձանագրությամբ Զեսար իշխանը հայտնում է.

«Ի թվին ՉՁԱ (1332) ... ես՝ Զեսար ... եւ կենակից իմ Խորիշահ ... ի հալալ արդեանց մերոց շինեցաք զհոգետունս ... աղաչեմք զպատահողսդ յիշել զմեզ ի Քրիստոս»[77]:

---

[74] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 141 և հետո:

[75] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 77:

[76] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 130:

[77] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 178:

Խորիշահի և Զեսարի կառուցած իշևանատանը ճանապարհորդներին ոչ միայն օթևան էր տրվում, այլև՝ ձրի սնունդ: Իշևանատունը հոգու մխիթարության մի ձեռնարկ էր, և արձանագրության մեջ այդպես էլ կոչվել է՝ «զհոգետուն»:

Սելիմի իշևանատունը կամարակապ շենք է, բաղկացած է երեք դահլիճներից, ներսում հարմարություններ են եղել ուղևորների և նրանց գրաստների համար: Բոլոր շենքերը կառուցված են սրբատաշ քարով, երկթեք կտուրները ծածկված են մեծ սալերով: Իրար մեջ բացվող դահլիճները վերջին տարիներին լրիվ նորոգվել են:

Խորիշահ իշխանուհու հիշատակին 1340-ական թվականների վերջին Սելիմի ձորում գտնվող Զեսար իշխանի հայրենի Հորս գյուղում խաչքար է կանգնեցվել[78]:

ԳՈՆՑԱ

Գոնցան Օրբելյանների տոհմից Խոստրովկա իշխանի դուստրն է, Շահռունեցու որդի Վահրամի կինը: Շահռունեցի իշխանները Օրբելյանների վասալներն էին, նրանց «ասպարապետները», իշխում էին Հերեր գյուղի և համանուն գետահովտի վրա:

Գոնցան 1345 թվականին նվերներ է տվել Ամաղուի Նորավանքին: Մեկ տարի անց, 1346 թվականին, Գոնցան մեծ նվիրատվական արձանագրություն է փորագրել տվել Թանահատի Սուրբ Աստվածածին վանքի հարավային պատին: Գոնցան Թանահատի վանքին է նվիրել իր գնած հողերը, բամբակ: Ահա Գոնցայի՝ Թանահատի վանքի նվիրատվական արձանագրությունը կրճատումներով.

«...ես՝ Գոնցէ, ամուսին Վահրամայ... ետու ի հալալ արդեանց եւ հերենեաց իմոց ի սուրբ ուխտս վասն հոգիորդեաց իմոց Ուքանա, Ամատին, որ տղա աւրաւք ի Քրիստոս կատարեցան. դիտի սուրբ Գե-(ո)րգն իւր հերենաւքն, իւր խաչին մտաւքն ի Համամատէան՝ զԳազարափոսին էգին՝ ԲՌ (2000) դեկան գնուածք ու Ճ (100) դեկան գնուած բամբակ, հող եւ Համամատէան ու զՈրձաքարին հողն ի յԱղջըրտապ...»[79]:

ՀՌԻՓՍԻՄԵ

Հռիփսիմեն Սադոնի և Թաճ Խաթունի դուստրն է, ապրել է 15-րդ դարի առաջին կեսում:

1427 թվականին Հռիփսիմեն Հիզանի Գամաղիել վանքի գրիչ Հոհաննեսին Ավետարան է պատվիրում:

Ավետարանի գրիչ Հոհաննեսը հայտնում է, որ չնայած իրեն տկար էր զգում, բայց գրում-ավարտում է Հռիփսիմեի պատվիրած Ավետարանը[80]:

ԳՈՒԼՓԱՇԱ

Գուլփաշան Մխիթարի դուստրն է, ամուսինն է Առաքելը:

1441 թվականին Գուլփաշան Քաջբերունյաց երկրի Գևորգ զորավարի վանքի գրիչ Թովմա Մեծոփացուն Ավետարան է պատվիրում:

Ձեռագրի հիշատակարանից իմացվում է, որ Գուլփաշան մեծ չարչարանքով գնացել է սուրբ քաղաք՝ Երուսաղեմ, և վերադառնալուց հետո է պատվիրել Ավետարանը: Ավետարանը նվիրված է իր՝ Գուլփաշայի, նրա ծնողների, ամուսնու, զավակների և առանձնապես վաղամեռիկ որդու՝ Մխիթարի հիշատակին, որի հանկարծահաս մահը անմխիթար սուգ է դարձել ծնողների համար:

Ավետարանի 10բ էջում ծնկաչոք դիրքով նկարված է Ավետարանի ստացող Գուլփաշան: Նա ձեռքերը երկարել և վերցնում է Ավետարանը: Նկարի կողքին գրված է. «Ցիշեցէք ի Քրիստոս զմահդասի պառաւդ՝ ստացող սուրբ Ավետարանիս»[81]:

Ձեռագրի գրիչը՝ Թովմա Մեծոփացին, հայտնում է, որ ձեռագիրը գրել է «ի ծերութեան ժամանակիս», երբ «խիստ տկար էի մարմնովս և հոգովս»:

Գուլփաշան Ավետարանը նվիրել է նույն վանքի րաբունի Ներսես վարդապետին ու նրա եղբորը՝ Ռստակեսին:

Ավետարանն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում:

ՇԱՀԲԵԿ

Գորիսի շրջանի Տեղ գյուղի եկեղեցու հարավային պատին խաչ է փորագրված Շահբեկ խանումի հիշատակին: Խաչի շուրջը փորագրված արձանագրությունում կարդում ենք.

«Թվին ՌԾԷ (1608). խաչս բարէխաւս է Շահբէկ խանումին»[82]:

---

[78] Նույն տեղում, էջ 167:

[79] Դիվան հայ վիմագրության, պրակ 3, էջ 56:

[80] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա մաս (1401—1450), կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Ե., 1955, էջ 367:

[81] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ 521:

[82] Դիվան հայ վիմագրության, պրակ 2, էջ 68: